ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2115—ՀԻՆԳՇԱԲԹԻ—20—ԱՊՐԻԼ—Ն. Տ.—2—ՄԱՅԻՍ—1878

ՊԱՅՄԱՆԻ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 մկճ.
» » Գաւառաց » 10 մկճ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4 մկճ.
» » Գաւառաց » 5 մկճ.
Ժամանակներ տողը մէկ անգամի համար 3 գուրուշ, երկու անգամի համար 2 գուրուշ, աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լայ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԻ

Դուրս գացած լրագրաց ճանրաձ ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակներ եւ թղթակցութիւն խմբագիր—Ցնորէնին պիտի ուղղուի, Ղալաթիա Վանարքճրլար Ճատտէսի թիւ 198, Նորս խան, Մասիսի գրատունը։

Ճանրաձ ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ 20 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մայրաքաղաքիս շրջակայքը գըտնուող Ռուսական զօրաց և Մարմարայի Անգղիական նաւատորմին մի և նոյն ժամանակի մէջ յետս նահանջման սկզբունքն՝ որ Գերմանիոյ կողմէն առաջարկուած էր, տակաւին Լոնտրայի և Բեռլրպուրկի արքունեաց կողմէն ընդունուած չէ. բայց Գերմանիա և Աւստրիա երկու հակառակորդ տէրութեանց ընդունելի կերպիւ յետս նահանջման դիծ մ'որոշել կը խորհէին և ասոր վրայ կը բանակցէին։ Գերմանիա կառաջարկէ եղեր որ Ռուսաց բանակն Ադրիանուպոլիս քաշուի, և Անգղիական նաւատորմը Պիրէոն կամ Սէլանիկի ծովախորշը։ Բայց կըսուի թէ Անգղիա այս առաջարկութիւնը չընդունիր։ Միանգամայն Գերմանիոյ կառավարութիւնը տէրութեանց խորհրդոյն մէջ ըլլալիք վիճաբանութեան հիմնադրին վրայ բանակցեցաւ։ Ցիշեալ հիմնադիրն որ Անգղիական նաւատորմին և Ռուսաց բանակին Կ. Պոլսոյ մօտերէն հեռանալէն ետև վերջնապէս պիտի որոշի, աւարկայ պիտի ունենայ եղեր 1856 ի և 1871 ի դաշնադրութեանց Այսթէֆանոսի դաշնադրութեան հետ բաղդատութիւնն, որ տէրութեանց խորհրդին վիճաբանութեանց նիւթ պիտի ըլլայ։ Պիսմարք իշխանին կողմէն տէրութեանց ուղղելի հրաւիրագրին մէջ այս նպատակը պիտի ծանուցուի եղեր։ Բայց երկու տէրութեանց պատերազմական զօրութեան Կ. Պոլսէն հեռանալուն վրայ երկու կողմէն բաւական առարկութիւններ կըլլային, և մինչև հիմայ յաջողութիւնը կասկածելի է։

Անգղիա նախամեծար կը համարի ներկայ վիճակին երկարաձգումը՝ քան թէ իւր բռնած նաւային դիրքը թողուլ։ Բրիտանական կառավարութիւնն իրաւամբ կրնայ կասկածիլ որ եթէ իւր նաւերն ետ քաշուին, Ռուսք առիթ մը գտնելով կրնան դարձեալ Կ. Պոլիս գալ. որովհետև զինադադարի պայմանագրութեան մեջտեղն հաղիւ չորցած էր, երբ Ռուսք որոշեալ գիծն անցնելով դէպ 'ի Կ. Պոլիս յառաջացան։ Անգղիա կրնա՞յ Մարմարայի ծովախորշը թողլով և Թուրքիա անպաշտպան Ռուսիոյ ազդեցութեան յանձնելով՝ յանկարծ Դարդանելի նեղուցը գրաւած գըտնել իրեն դէմ և երկամեայ ազգութքաղաքականութեան մը պտուղները կորուսանել։ Հետևաբար չկարծուիր որ երկու տէրութեանց պատերազմական զօրութիւնը Կ. Պոլսոյ շրջականերէն կարենայ քաշուիլ։ Ռուսիա մեծ յաջողակութեամբ աշխատած էր անցեալ տարի մինակ Թողուլ Թուրքիա, որպէս զի ընդհանուր լռութեան մէջ պատերազմ հրատարակէ անոր դէմ։ Ներկայ դիւանագիտական գործողութեանց մէջ ալ գրեթէ նոյն ընթացքը բռնելով՝ զԱնգղիա առանձնացնել կուզէ. քանզի եթէ այս վերջինը Գերմանիոյ և Աւստրիոյ միջոցաւ Ռուսիոյ ըրած առաջարկութիւնները մերժէ, գրեթէ անցեալ տարի Թուրքիոյ գտնուած առանձնացեալ դրից մէջ պիտի իյնայ։ Բայց անգղիական նախարարք խորհրդարանին մէջ յայտարարեցին թէ առանձին մնացած չեն։

Ռուսք մայրաքաղաքիս շրջականերէն հեռանալու համար ուրիշ դըժուարութիւն մ'ալ կը հանէին։ Կը պահանջէին որ կանխաւ Շումնու, Վարնա և Պաթում իրենց յանձնուին։ Բայց Բ. Դուռը պատասխաներ է թէ իւր զօրաց մէկ մասն յետեալ ամրոցներէն հանուած է, և մնացեալն ալ պիտի հեռանայ երբոր Ռուսական զօրքը Պուլղարիոյ սահմաններէն դուրս գրաւած տեղերը պարպէ։ Պէրլինի պաշտօնական շրջանակներուն մէջ ներկայ բանակցութեանց այնչափ մեծ կարևորութիւն չէր տրուեր, քանի որ Անգղիա և Ռուսիա իրենց զինուորական պատրաստութիւնները կը շարունակեն։ Պէրլինի մէջ կը կարծուէր նաև թէ Լորտ Սալիզպըրիի շրջաբերականին իմաստին համեմատ՝ տէրութեանց խորհրդին մէջ Այսթէֆանոսի դաշնադրութեան վրայ վիճաբանութիւնը Ռուսիոյ անընդունելի պիտի ըլլայ, քանզի այս տէրութիւնն Անգղիոյ պահանջմանց զիջանիլը նըւաստութիւն պիտի համարի իրեն։

Քանի մը լրագիրք Հիրշի հեռագրական լուրերէն առնլով տեղեկութիւն մը կը հրատարակեն Անգղիոյ առաջարկութեանց վրայ, բայց վաւերական չհամարուիր։ Անգղիա կառաջարկէ եղեր՝ Պուլղարիոյ սահմանները պակսեցնել, Գարատաղի նահանգիստ չտալ, Սերվիա Թուրքիոյ հպատակեցնել. Պաթումը մինչև Ալէքսանդրօրօլ Ռուսիոյ տալով՝ անկէ զատ յետեալ տերութեան հող չը յանձնել, և պատերազմական տուգանաց մնացեալ մասն Օսմանեան նոր և միացեալ արժեթուղթով վճարել։ Իսկ Օսմանեան հին և նոր պարտքերը միացնելով՝ նոր արժեթուղթեր պիտի հանուին եղեր շրջաբերութեան՝ հարիւրին երեք տոկոսով, և մինչև հիմայ ունեցած գիներուն միջին հաշուով, որոց գլուխն ու գլխավճարը բաբենորոգեալ գաւառաց եկամուտներէն պիտի հատուցուին եղեր՝ տերութեանց երաշխաւորութեան ներքև։ Այն երաշխաւորութիւնն յանձն առնլով մեծ տերութիւնք (Ռուսիա ալ 'ի միասին)՝ հսկողութեան ու պաշտպանութեան իրաւունք պիտի ստանան Թուրքիոյ ամեն քրիստոնեայ դաւառաց վրայ, դլխաւորապէս Հերսէքի, Պոսնիոյ, Եպիրոսի, Թեսալիոյ, Մակեդոնիոյ, Պուլղարիոյ և Հայաստանի վրայ։ Այս գաւառները տեղական պիտոյից յարմար վարչական բարենորոգումներ պիտի ստանան, և միջազգային խառն յանձնաժողով մ'առանձնաշնորհեալ դաւառաց իւրաքանչիւրին մէջ բարենորոգմանց ճշդիւ գործադրութեանն հսկողութիւն պիտի ընէ տերութեանց կողմէն, և պիտի հոգ տանի որ այլ և այլ հարկերը կանոնաւորապէս Թուրքիոյ գանձը հասնին և Օսմանեան պարտուց տոկոսներն ու գլխավճարները ճշդիւ վճարելու վիճակի մէջ դնեն զայն։ Սոյն ծրագրին վաւերականութիւնը մինչև հիմա չ'ստուգուեցաւ։

* * *

Գաղղիական Ցէպա լրագրին Կ. Պոլսոյ թղթակցին գրած կարևոր մէկ նամակն, որ Հայոց մասնաւոր շնորհագալեայն արժանի է, վարը կը թարգմանենք։ Այսկէ կրնայ տեսնուիլ որ Եւրոպա ուշադրութիւն ընել սկսած է Հայկական տարրին. բայց այս տարրը պէտք է ինքն ալ կենդանութեան նշաններ ցոյց տայ և ապացուցանէ թէ մեռեալ չէ, այլ արժանի է քաղաքական իրաւանց և կրնայ զանոնք պահպանելու գործադրել։ Մինչև հիմա դաւառական նամակներն, երբ հարստահարութիւն կամ սպանութիւն մը ծանուցանեն, պատրիարքարանի ուղղեալ ողորմելի լացերէ ու ողբերէ զատ պարունակութիւն մը չունին։ Բայց պէտք է գիտնալ որ այս բանն ապիկարութեան նշան կըրնայ համարուիլ, և դժբաղդաբար՝ զօրութիւնը պաշտող Եւրոպա շատ համակրութիւն չունի ապիկարաց։ Մեր ազգայինք գո՞նէ պէտք էր որ իրենց անզօրութեան պատճառները ցուցընէին. գո՞նէ պէտք էր հաստատէին թէ իրենք պատրաստ են իրենց կեանքը, ինչքն ու պատիւը զէնքով պաշտպանելու, եթէ տեղական պաշտօնատարք զիրենք բոլորովին անզէն ու անպաշտպան վիճակի մէջ չը դնէին, մինչդեռ զիրենք հարստահարողք յոտից յգլուխ զինեալ են։ Երբ գաւառացի ազգայինք խնդիրն այս կերպիւ չեն ներկայացներ, դըժուարին է որ իրենց պաշտպանութիւնը կարելի և դիւրին ըլլայ։ Պէտք է որ այսուհետև հարստահարողք, բռնաբարիչք և վայրենաբարոյ ցեղեր տեսնեն ու համոզուին, որ առանց իրենց կեանքը վտանգ ելու չպիտի կըրնան Հայուն կեանքը կամ ինչքը բառնալ կամ անոր պատուոյն դէմ յարձակիլ, և հարկաւ այն ատեն հիմակուան չափ դիւրութեամբ և առանց քաշուելու չեն յարձակիր Հայոց վրայ։ Բայց եթէ տեղական պաշտօնատարք Հայոց անձնական պաշտպանութեան միջոցները կը զլանան, ըստ մեզ պահանջելու է ատանք, մինչև որ իրաւունքը կատարելապէս ձեռք բերուի։ Առանց անձնական պաշտպանութեան՝ միայն ողբն ու կականն ուրիշ արդիւնք չեն կրնար ունենալ, բայց եթէ զայն՝ որուն դժբաղդաբար քանի տարիներէ 'ի վեր ականատես կը դառնունք, և որ, եթէ ներկայ անզօրութիւնը շարունակէ, անվերջանալի կրնայ ըլլալ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բեռլրպուրկ 26 ապրիլ.

Այս իրիկուան Ռուս թերթերուն կարծիքն այն է թէ Գերմանիոյ հաշտարար ջանքն ապարդիւն եղած է։

Լոնտրա 27 ապրիլ.

Անգղիա կը խնդրէ որ Ռուսիա Արևելեան խնդրոյն վրայ Եւրոպիոյ դերիշխանութիւնը ճանչէ՝ 1871 ի յայտարարութեան համեմատ, զոր Ռուսիա ստորագրած է։

Թայմզ լրագիրը Պէրլինէն հեռաւեալ հեռագիրը կը հրատարակէ երէկուան թըւականաւ։ «Անգղիոյ նաւատորմին և Ռուսական զօրաց միառնարար Կ. Պոլսոյ շրջականերէն հեռանալու համար բացուած բանակցութիւնք ապարդիւն ելան, և տէրութեանց խորհուրդ գումարելու առաջարկը նորէն ձեռք առնուեցաւ։»

Պէրլին 27 ապրիլ.

Հիւսիսային Գերմանիոյ Կազէթ լրագիրը կըսէ թէ Անգղիական նաւատորմին Պոլթիկ ղրկուիլն, ուր մինչև ցարդ չեզոք մնացած չահերու կրնայ դպչիլ, ներկայ վիճակն աւելի կրնայ կնճռոտել։

Փարիզ 27 ապրիլ.

Գաղղիոյ Բոէսի Ֆոնսիկ Պանքային բաժանորդաց ընդհանուր ժողովն այսօր տեղի ունեցաւ։ Ցիշեալ Պանքային կառավարչին տեղեկագիրը կըսէ թէ Գաղղիա և Անգղիա Եգիպտոսի Խոտիվն իւր պարտականութիւնները կատարելու հրաւիրելով, Եգիպտական արժեթղթոց մայիս 1 ի կարոնին վճարումն ապահովցաւ։

Փարիզ 28 ապրիլ.

Զրոյց կը պտըտի թէ Մոլթքէ կոմսին Գօրէնհակ և Սթօքօլմ երթալուն նպատակն է Պոլթիկի ծովը փակուած հրատարակելու համար համաձայնութիւն մը յառաջ բերել Գերմանիոյ Ռուսիոյ Տանիմարքայի և Շվէդիա կառավարութեանց մէջ։

Հռոմ 29 ապրիլ.

Տիրիթթօ լրագիրը կէս պաշտօնական կերպիւ կը յայտնէ թէ Իտալիա երբէք չհրաւիրեց Անգղիոյ կառավարութիւնն, ոչ միայնակ, ոչ ալ ուրիշ տէրութեանց հետ, որպէս զի Արևելեան ախտարհատարութեան վրայ իւր հիմնագիրը ներկայացնէ։

Բեռլրպուրկ 29 ապրիլ.

Ռուսիա մանրամասնութեանց մէջ մեծ զիջումներ ընելու ստամոդիր է. բայց Այսթէֆանոսի դաշնադրութիւնը Տէրութեանց խորհրդին իրաւասութեանը յանձնելու խնդրոյն նկատմամբ զիջում չպիտի ընէ։

Վիէննա 29 ապրիլ.

Լրագրաց ամենց առաջ այն լուրը թէ Աւստրիական զօրքերը քիչ օրէն Պոսնիա և Հէրսէք պիտի դրաւեն, պարզ ենթադրութիւն մ'է։ Այս մասին դեռ վերջնական որոշում մ'եղած չերևիր։

Լոնտրա 29 ապրիլ.

Զրոյց կը պտըտի որ եթէ Ռուսիա իւրանած դրից մէջ յամառի Անգլիա Լոնտրայի մէջ Եւրոպական դեսպանախորհուրդը գումարելու դիտաւորութիւն ունի։

Պոմպայ 29 ապրիլ.

Հնդկաստանի զօրաց առաջին զօրագունդ մ'այսօր Պոմպայէն ճանրայ ելաւ 'ի Մալթա։

Վիէննա 30 ապրիլ.

Քաղաքական վիճակը միշտ նոյն է։ տէրութեանց մէջ բանակցութիւնք տակաւին հաւասալ կուտան թէ Արևելեան խնդիրը լուծելու միակ ձեռնհասութիւն ունեցող Տէրութեանց խորհրդոյ գումարումն հնարաւոր է։ Համաձայնութեամբ ճանչուած է թէ Ռուսիա անկարող է առանց միւս տէրութեանց գործակցութեան կատարել ուզած պաշտօնն 'ի գլուխ հանել։

Լոնտրա 30 ապրիլ.

Լորդ Հարտի՝ հարցման մը պատասխանելով հասկցուց թէ Եւրոպա իրաւունք ունի Այսթէֆանոսի դաշնադրութիւնն ունայնացնելու. իրաւունք մը, զոր թէ՛ Անգղիոյ և թէ միւս տէրութեանց համար կը պահանջէ։

Զինուորական պատրաստութիւնք ընդարձակ կերպիւ կը շարունակին։

Բեղրսպուրկ 30 ապրիլ.

Կորչաքոֆ իշխանին վիճակը բարւոքած է. բայց տկարութիւնն ու կաթուածի նշանները կը՛շարունակեն, որով պաշտօնական զբաղմունք անհնար են իրեն համար։

Վիէննա 30 ապրիլ.

Քոռէսպոնտանս Բոլիթիք լրագիրն հետևեալ հեռագիրը կը հրատարակէ Բեղրբսպուրկէն. «Թէ և Կորչաքոֆ իշխանին հիւանդութիւնն յառաջդիմած չէ, բայց և այնպէս կը թուի թէ դիտաւորութիւն կայ Շուվալոֆ կոմսը Լոնտրայէն կոչելու, որպէս զի արտաքին գործոց նախարարի պաշտօնը վարէ Կորչաքոֆ իշխանին հիւանդութեան միջոցին։

Փարիզ 30 ապրիլ.

Արուեստահանդէսն ամեն մարդ կը գրաղեցնէ։ Հոլանտայի գահաժառանգ Հէնրի իշխանն և Իտալիոյ Ամէտէ արքայորդին Փարիզ եկան։

Հռոմ 1 մայիս.

Արտաքին գործոց նախարար Քորթի կոմսն յայտնեց երեսփոխանաց ժողովին մէջ թէ Իտալական կառավարութիւնն հնար եղածին չափ հեռի պիտի կենայ միշտ քաղաքական կնճիռներէ։

Պուքրէշ 1 մայիս.

Կառավարութիւնն ստուգեց թէ այս միջոցիս 56000 Ռուս կայ Ռումանիոյ մէջ։ Սակայն Ռուսական մեծ զօրութիւնք կուգան շարունակ, և Ռուսիա կը ջանայ միշտ նոր պայմանագրութիւն մը կնքել Ռումանիոյ հետ։

Լոնտրա 30 ապրիլ

Օսմ. Քոնս.		8 1/16
Փոխ.	1865	3/8
»	1869	7 7/8
»	1871	32 1/2
»	1872	13
»	1873	7 3/4
» Եգիպտ.		53 1/8
Անգլ. Քոնս		94 15/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Ծովային գործոց նախորդ նախարար Սայիտ փաշան կայսերական պալատան Միւշիր անուանեցաւ։

Պատերազմական գործոց նախորդ նախարար Բէուֆ փաշան զինուորական խորհրդին անդամանուանեցաւ։

Կըսուի թէ Վ.Հ. Սուլթանն իւր Ալէմտաղիի ագարակը Կ. Պոլիս բնակող դպրոցականաց պարգևներ է, հրամայելով որ անոնց բաժնուի։

Շաբաթ օրը Բեղրսպուրկէն հեռագիր եկաւ Նիքոլա մեծ դուքսին թէ կայսրը Ֆէլտ-Մարէշալի բարձր աստիճանը առած է իրեն։ Կըսուի թէ Կովկասեան գաւառաց փոխարքայ Միխայիլ մեծ դուքսին ալ տրուեր է նոյն աստիճանն, որով Ռուսիոյ մէջ Ֆէլտ-Մարէշալներուն թիւն երեք կըլլայ Պարիսթինսքի իշխանին հետ։

Ասկէց զատ կուրքս, Միլութին և Ռատեցքի զօրավարներուն կոմսութեան աստիճան տրուեր է։ Սքոպելէֆ (երիտասարդ) զօրավարին ալ ականակուռ սուր մը դրկեր է կայսրն 'ի վարձատրութիւն Պալքաններն անցնելուն։

Պասիրէթ լրագիրը կը ծանուցանէ թէ Նիքոլա մեծ դուքսը դատեր է Բ. Դրան թէ Ռումէլիի մէջ ստք ելնող բոմբքներուն և քրիշաբներուն մէջ բազմաթիւ կանոնաւոր զօրականք և սպայք կան, որք Այսթէֆանոսի դաշնադրութեան հակառակ պատերազմական վիճակը կը շարունակեն։

Ասոր վրայ պատերազմական գործոց նախարարն Օսմանեան սպայակոյտի անդամներէն Մուսթաֆա պէյ պնդապետն և քանի մ'ալ սպայ դրկեց Ռումէլի, որպէս զի երթան այս իրողութիւնը քննեն։

Միանդամայն Լիվա Սամիհ փաշա և վաստա էֆէնտի Բ. Դրան կողմէ, և երկուք ալ Ռուս սպայք Ռուսաց զինուորական հրամանատարութեան կողմէ Ֆիլիպէ գնացին ապստամբութեան պատճառները քննելու և խաղաղութիւնը վերահաստատելու համար։

Նիքոլա մեծ դուքսին տեղ հարաւային բանակին ընդհանուր հրամանատար անուանեալ Թոթլեպէն զօրապետը շաբաթ օրն Էյրիքլիք չոգենաւով Կ. Պոլիս եկաւ Օտէսայէն, և ուղղակի Այսթէֆանոս ելաւ։

Ինչպէս որ ծանուցուած էր, երկուշաբթի օրը Նիքոլա մեծ դուքսն Այսթէֆանոսի դաշտին մէջ մեծ զօրահանդէս մ'ընելով՝ մեծաք բարով ըսաւ իւր զօրաց, և նոր հրամանատար Թոթլէպէն զօրավարն անոնց ներկայացուց։

Նոյն իրիկունը Մեծ դուքսն Այսթէֆանոսէն մեկնելով մայրաքաղաքս եկաւ և գիշերը Լիվատիա չոգենաւին մէջ անցուց։

Երեքշաբթի օրը ժամն երեքին միջոցներն Եըլբզի կայսերական պալատն երթալով՝ Թոթլէպէն զօրապետը Վ.Հ. Սուլթանին ներկայացուց, և կէս ժամու չափ տեսակցելէ ետև բաժնուեցաւ։ Վ.Հ. Սուլթանէն և ուղղակի Լիվատիա չոգենաւն երթալով՝ կէս օրին միջոցները մեկնեցաւ մայրաքաղաքէս յՕտէսա։

Պետական խորհրդոյ անդամ Գուլյումճեան Պետրոս էֆէնտին երէկ մայրաքաղաքէս մեկնեցաւ 'ի Հռոմ՝ Վ.Հ. Սուլթանին կողմէ Նորընտիր Լէոն ԺԳ. Պապը շնորհաւորելու։ Պետրոս էֆէնտի Հռոմէն փարիզ պիտի երթայ թղթատարութեանց միջազգային ժողովին ներկայ գտնուելու։

Անցեալ շաբթու երեք Անգլիացի ծովային սպայք Քէհատխանէ պարտելու երթալով, մէջերնէն մին ընկերներէն կը հեռանայ և լեռան գագաթը կելնէ շրջակայ տեսարանը վայելելու։ Յանկարծ զօրականի կերպարանք երեք մարդ վրան կը յարձակին և զինքը կը կողոպտեն։ Թերևս պիտի սպաննէին ալ զայն, եթէ ընկերներն հեռուէն անոր աղաղակը լսելով օգնութեան չհասնէին։ Իսկ կողոպտողները ձգեր փախեր են և մեծ փութով կը փնտռուին։

Այս դէպքին պատճառաւ քէհատխանէ պտըտելու երթալն արգիլուեցաւ հասարակութեան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

19 ապրիլ չորեքշաբթի իրիկուն	8,32
20 ապրիլ հինգշաբթի առաւօտ բացուեցաւ	8,32
Ժամ 6 ին	8,33
Ռումելիի երկաթուղի	Ֆր. 28 75
Թղթադրամ	վր. 278

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 19 Ապրիլ

Սոսիէթէ ժէնէրալի բաժ. Անգղ. վր.		2,33
» փոխանակութեան	»	2, 5
Կ. Պոլսոյ Պանքային	»	3,
Քրէտի ժէնէրալ	»	2,10
Քրէտի Օսթրօ—Թիւրք	»	—
Փոխ. 1863	Ֆր.	39
» 1865	»	40
» 1869	»	38
» 1872	»	14
» 1873	»	36 50
Թրամուայ	Օսմ. վր.	1 50

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

19 Ապրիլ

Անգլ. վրա	ղրշ.	109 4
Նարօյէն ասկի	»	87 4
Խմբէսիալ Ռուս	»	88 38
Գըրբմից	»	50 35
Չինդ Փրանք	»	—
Չինդ Նոց	»	120 20
Պլինտ	»	165

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Պատրիարք Հայրը կիրակի իրիկուն Տատեանց Գերդաստանին հրաւիրանօք Այսթէֆանոս գնաց հետևեալ առաւօտուն պատարագ մատուցանելու համար, և այս առթիւ նոյն իրիկունը Նիքոլա մեծ դուքսին հետ ալ տեսակցեցաւ. բայց դիշերը տկարութիւն դալով վրան, պարտաւորեցաւ հետևեալ առաւօտուն կանուխ իւր տունը վերադառնալ՝ առանց կարենալ պատարագելու։

Մայրաքաղաքիս անգղիական դեսպան վսեմ. Պ. Լէյբրա երեքշաբթի օրն իւր երկրորդ թարգմանը Ս. Պատրիարքին ղրկեց 'ի շնորհաւորութիւն Զատկի տօնին։

Երէկուան Լրագրոյ մէջ հետևեալը կը կարդանք.

«Զատկին առաջին օրն Այսթէֆանոսի քարոզիչ վարդապետ Թաթարեան Արժ. Գարեգին Ս. Հայրն ու քահանայն երբ Տատեանց Գերդաստանին կերթան Տունօրհնէքի արարողութիւնը կատարելու ըստ սովորութեան, Մեծ դուքսը ինքն ալ փափաք կը յայտնէ օրհնութեան աղօթից ներկայ գտնուելու. ուստի և ինքը թոթլէպէն զօրապետին և իւր հետևորդ միւս սպայից հետ միասեղ՝ Տատեանց ընտանիքին բնակած յարկին մեծ սենեակը կիջնեն, և հոն խնկամանին ու գինւոյ բաժակին հետ միասեղ, Մեծ դուքսն և բոլոր սպաներն իրենց սուրերն ու գլխարկին հանելով կը դնեն մի և նոյն սեղանին վրայ, և մինչև օրհնութեան աղօթից վերջը ամենայն ջերմեռանդութեամբ ունկնդիր կը կենան Տատեանց ընտանիքին հետ միասեղ, և ապա իրենց յատկացեալ սենեակը կը քաշուին։»

Կը լսենք թէ Նիքոլա Մեծ դուքսը, Տատեանց Գերդաստանէն տեսած հիւրընկալութեան փոխարէն, կայսեր յատուկ հրամանագրովը շնորհեալ Ս. Սթանիսլաւի երկրորդ խաչանշանը Տատեան վսեմ. Առաքելէֆէնտիին, և նոյն կարգին երրորդ պատուանշանն անոր եղբօրը Մարտիկ պէյին յանձնելու է կիրակի իրիկուն իւր ձեռօք։

Տատեանց Գերդաստանին մեծ պատուոյ անդամաց ալ ուրիշ այլ և այլ կարգի պատուանշաններ տրուեր է։

ՀԱՅԿ

Ահաւասիկ Գաղղիական Տէպեշ լրագրին ապրիլ 16 թուով թերթին մէջ հրատարակեալ նամակին թարգմանութիւնը։

«Դուք քանիցս անգամ Ռուսաց պահանջումներուն դէմ Ռումէլիոյ ըրած հիմնաւոր գանգատներուն վերայ խօսեցաք։ Նմանապէս Թուրքաց իրաւապահանջութեանց վրայ գրեցիք, և անոնց արդարացի ըլլալը ցոյց տուիք։ Բայց Օսմանեան կայսրութեան կրելիք հիմնական փոփոխութեանց մէջ իրաւանց պահանջումներնեցողները միայն Թուրքերն ու Ռումէնները չեն։ Հայերն ալ իրաւունքներ ունին, զորս թէ և պէտք 'ի ձեռին պահանջած չեն երբէք, թէ և ուրիշ ամեն ժողովուրդներէն աւելի հլութեամբ հպատակած են թուրքաց իշխանութեան, թէ և երկրին ընդհանուր կառավարութեան մէջ գործօն մասնակցութիւն մ'ունեցած և իրենց անժխտելի ուշմութեամբն ու ճարպիկութեամբ ազդեցութիւն ձեռք բերած են երկրին մէջ, սակայն իրենց իրաւունքները գուցէ Օսմանեան իշխանութեան ներքև գտնուող ամեն ազգութեանց իրաւունքներէն աւելի բացայայտ գծուած են։

«Ինչ որ ալ ըլլայ, ամենէն հին ըլլալնուն տարակոյս չկայ։ Հայք, առանց բնաւ հակառակ ըլլալու Եւրոպական քաղաքակրթութեան, չե՞ն կրնար իրօք այն ժողովրդոց կարգէն համարուիլ, որք խիստ հին ժամանակներէ 'ի վեր իրենց ազգութիւնը լեզուն և յատուկ նկարագիրը լաւ պահած են։ Եւ սակայն ո՞րչափ այլազան իշխանութեանց ներքև ինկած են, բիւրա և վայրագ իշխանութեանց, որոց վերջին նկարագիրն են Քրդաց և Չերքէզաց բռնութիւնները։ Մինթէ վերջին պատերազմին ժամանակ այդ վայրագներն Հայաստանի մէջ հազարաւոր զոհեր չըրին։

«Այսթէֆանոսի դաշնադրութեան 16րդ յօդուածը բացորոշապէս կը ճանչէ թէ Հայոց նկատմամբ ալ տրնօրէնութիւն մ'ընել հարկ է։

«Նկատելով որ, կըսէ յիշեալ յօդուածը, Ռուսական զօրաց Հայաստանի մէջ գրաւած բայց Թուրքիոյ վերադարձընելիք տեղերէն մեկնիլը կրնայ կռիւներու և երկուքէրութեանց բարեկամական յարաբերութիւններուն վնաս բերող կնճիռներու ծնունդ տալ, Դուռը պարտաւորութիւն յանձն կառնու Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարեփոխումներն ու բարենորոգումներն առանց այլ ևս յապաղելու գործադրել, և Քիւրդերուն ու Չերքէզներուն դէմ անոնց ապահովութիւնն երաշխաւորել։»

«Այս յօդուածը, թէ և հակիրճ՝ բայց շատ պերճախօս է։ Արդարև, ինչպէս կըլլայ, որ Ռուսիա՝ Բ. Դրան խոստումներուն սովորաբար վստահութիւն չընծայած ժամանակ, և այս ալ ոչ առանց իրաւանց, Հայաստանի ապահովութեան խնդրոյն մէջ յանկարծ անոր խոստմանը կը կապի։ Ճշմարիտ է որ յօդուածին առաջին պարբերութեան մէջ երկբայութիւնն և երկբայութենէն աւելին կընդնշմարուի, վասն զի այս կը յայտնուի թէ «կռիւներ և երկուքէրութեանց յարաբերութիւններուն վնաս բերող կնճիռներու ծնունդ տալ» Ճշմարիտ է նաև որ պայման դրուած է թէ Բարձր Ասիոյ հայկական գաւառները նոյն վարչութիւնը պիտի ունենան՝ ինչ որ ունենան Պալքանաց

քրիստոնեայ գաւառներէն ամենք, և տեղական պիտոյից յարմար բարենորոգումներ պիտի ստանան։ Բայց այս ամենն ալ խիստ տարաբաղձ են, և շատ չեն քաջալերեր հայրենասէր Հայերն, որոց հետ առիթ ունեցայ իրենց ներկայիս ու ապագայի վրայ խոսակցելու։

«Ասոնք ծայրայեղ բաղձանքներ չունին. Օսմանեան հպատակութենէն ազատիլ և Հայաստանի մէջ թագաւորութիւն հաստատել չեն մտածեր. նմանապէս իրենց կրած չարիքն իրենց երկրին մէջ դտնուող իսլամ ժողովրդոց հասուցանել չեն ուզեր. այլ մէկ բանի մը կը բաղձան, այն է՝ իրենց գործունէութիւնը զարգացնելու ազատութեան. այն ժամանակ կարող կըլլան իսլամաց հետ մի միասին ապրիլ, և ոչ թէ բռնութեամբ՝ այլ միայն համոզողութեամբ շահուց ձուլում յառաջ բերել. երազ մը, որ միշտ հեռատեսներ ունեցած է, բայց ոչ հասնող։

«Եւ արդարև Հայերը կարող չե՞ն իրենց մէջ լաւ վարչութեան մ՚ամեն տարերքը դանելու, որ միայն կրնայ հակադիմութիւնները ջնջել և միտքերը խաղաղել։ Հայք աշխատասէր են, կիրթ և արևմտեան որևէ ժողովրդոց չափ եւրոպական քաղաքակրթութեան յառաջադիմութիւնները ընդունիլ։ Ռուսի այդ երկրին ինքնօրէն վարչութիւն մը շնորհելը բնաւ վախնալու բան մը չունի, և որևէ լոյսի արգելք մը չկրնար ընդդիմանալ այդ բանին։ Մանաւանդ Հայոց ցրուեալ վիճակն առարկելու իրաւունք ալ չկայ. վասն զի Օսմանեան ոչ մէկ գաւառի մէջ հընար չէ աւելի հոծ համախմբութիւն մ՚և ակներև մեծամասնութիւն մը գտնել։

«Թուրքիոյ ձեռքը մնացած բարձրը Հայաստանի և Մեծ Հայաստանի մէջ, յորմէ Եփրատ և Տիգրիս գետերը կանցնին, և որ հարաւի կողմէն մինչև Տաւրոսի սարոյն, և արևմտից կողմէն ալ մինչև Էնկիւրիի շրջականները կը տարածի, պաշտօնական վիճակագրութեան ցոյց տուած 3523343 բնակչաց երկու միլիոնէն աւելին Հայ են. և տակաւին շատով կրնան աւելնալ այն ամեն Հայերով, որք ապրուստի միջոցներ գտնելու համար դուրս ելած են։ Միայն Կ. Պոլսոյ մէջ 100000 ի մօտ Հայ կայ։ Կարնոյ գաւառին մէջ՝ 1600000 բնակչաց 1 միլիոնը Հայ, 400000 ը Թուրք, 200000ը Քիւրդ, մնացեալներն Եզիդի և ուրիշ սատանայապաշտք են։ Այսպիսի պատկառելի մեծամասնութիւն մը՝ վայրագ և աւարառու ցեղերու անգութ ասպատակութեանց ենթակայ եղած է, զոր Թուրք կառավարութիւնն անկարող է արգիլելու, և խիստ թոյլ կերպիւ կը ջանայ զսպել։ Քրիստոնեայ ժողովուրդները պաշտպանելու քիչ յօժարութիւն ցուցած է միշտ, և երբոր այս տեսակ առթի մը մէջ գործել պէտք ըլլայ, շատ անգամ անզօր կը դտնուի։

«Ուրեմն անհրաժեշտ է որ շարունակ ապառնալեաց ներքև դրուելով այս քրիստոնեայ տարերքն իրենք զիրենք պաշտպանելու վիճակի մէջ դրուին։ Հայերն տակէց զատ ուրիշ բան չեն պահանջեր։ Եթէ վերջապէս չկրնան այս հիմնապէս բնական իրաւունքը ձեռք բերել, Օսմանեան կայսրութեան անբաժանելի մէկ մասը մնալու բաղձանքնուն հակառակ պիտի ստիպուին երթալ ուրիշ պաշտպանութիւն մը խնդրելու, որ կարող ըլլայ իրենց կեանքն ու դոյքն ապահովել. վասն զի պարզապէս ոստիկանութեան խնդիր մ՚է այս։

«Թուրքիոյ անցեալը դժբաղդաբար ապագային համար քաջալերիչ չէ։ Այսթէֆանոսի դաշնագրութեան 16 րդ յօդուածն՝ իւր ներկայ իմաստով՝ Ռուսաց Հայաստանի մէջ տարածուելուն ճանապարհները միայն կը պատրաստէ։ Եփրատայ ձորն և Տաւրոսի բոլոր գագաթներն այս կերպիւ մօտալուտ գրաւման մ՚ապառնալեաց ներքև կը գտնուին, գրաւում մը, որուն առաջքն առնելու մէկ միջոց մը միայն կայ, այն է ինքնօրինութիւն։

«Հայաստան Ռուսիոյ բազկաց մէջ նետելը միթէ բռնաբարել չէ՞ ազգութեանց մեծ սկզբունքն, յանուն որոյ քանի տարիէ՝ի վեր Եւրոպա տակնի վերայ կըլլայ։ Միթէ Սլավ տարերք կա՞ն Կարնոյ և Տրապիզոնի կուսակալութիւններէն մնացած գաւառաց մէջ, վանայ Սեբաստիոյ և Տիարպէքիրի կուսակալութեանց մէջ և Տաւրոսէն անդին Կիլիկիոյ մէջ։ Հայը խիստ հեռի է Սլավութենէ։ Գանէ կրօնական շա՞հ մը կենայ. բընաւ ամենևին։ Հայն և ոչ իսկ Օրթոտոքս է բաւական Յունական նշանակութեամբ։

«Քաղաքականապէս Հայաստան Ասիոյ մէջ էապէս չեզոք տարր մը կը ներկայացնէ, ինչպէս Եւրոպիոյ մէջ Զվիցցերն, որուն կը մնաենայ իւր բնակչաց բնաւորութեամբն ու տրամադրութեամբք, և միութեան գիծ մը կը կազմէ Արևմտից և Արևելից միջև, որոյ ճշմարիտ քաղաքակրթիչ սկզբունքն ըլլալու սահմանուած է։

«Թող չխաբուի Եւրոպա։ Հայք իրենց դատը պաշտպանելով՝ միանգամայն Եւրոպիոյ շահերը կը պաշտպանեն։ Եթէ Ռուսիա, չենք ըսեր 16 րդ յօդուածին հակառակ, այլ անոր զօրութեամբ, որովհետև անխուսափելի վախճանի մը բաղձանքը կը պարունակէ, Հայաստանը Ռուսական նոր գաւառ մ՚ընելու յաջողի, Եփրատայ ձորն անոր ձեռքը կանցնի, Սուրիա վտանգի մէջ կիյնայ, և Միջերկրականն նաև էն ու կողէն սպառնալեաց կենթարկի մերձաւոր ապագայի մը մէջ։

«Հայք մեծ դժուարութիւն չունեցան այս վտանգը ցոյց տալու այլ և այլ տեղութեանց։ Դորձին վիճակը ներկայացնել բաւական էր։ Միանգամայն ցոյց տուին իրենցմէ առաջարկեալ դեղն, որ է ինքնօրինութիւն։ Ուրիշ բան է եթէ դաշնագրութեան 16 րդ յօդուածն Եւրոպական յօդուած մ՚ըլլայ, այսինքն եթէ Եւրոպա անոր իսկապէս և վերջնական դործադրութեանն հսկէ։ Կը յուսան որ այս մասին ձեռնտուութիւն չպիտի պակսի իրենց, որովհետև ընդհանուր շահու խնդիր կայ։ Համոզուած են որ այս խնդիրը պիտի կրնայ հակցուիլ, ինչպէս որ իրենք կը հաւնան։»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Երեքշաբթի աւուր Լէվընթ Հէրբերտ լրագրին վերջին մակագրով հետևեալ խօսակցութիւնը կը հրատարակէ, զոր Օսմանեան Հայ մը բարձրաստիճան Ռուսի մը հետ ըներ է։ Հայն՝ իւր հայրենի երկրին վրայ ունեցած կարծիքն յայտնելու հրաւիրուելով, հետևեալ կերպիւ խօսեր է։

Կիսանանք թէ Հայաստանի այն կողմերն՝ ուսկից Ռուսք կը մեկնին, Քիւրդերը կոտորածներ աւարառութիւններ և պատուոյ բռնաբարութիւններ կընեն։ Խընուսի գաւառին մէջ, որ Կարնոյ և Մշոյ միջևն է, 3000 ի չափ Քիւրդ երեք Հայ դիւղերու վրայ յարձակելով՝ սպանութիւններ ըրեր, կանանց և աղջկանց պատիւը բռնաբարեր, եկեղեցիները պղծեր, և տուներն աւարի տուեր են։ Ասկէց զատ Մշոյ վանքին բոլոր դուռն յափըշտակեր տարեր են, և վանքին միաբանութիւնը պատդամաւորութիւն մը ղրկեր է՝ի Կ Պոլիս, որպէս զի արդարութիւն ձեռք բերէ Դռնէն։ Բայց այս ջանքը չը յաջողուիր որ արդիւնք մ՚ունենայ, որովհետև տէրութեան պաշտօնատարներն, որ սովորաբար խուլ են այս տեսակ դանդատանաց, Զէյթունի Հայ ժողովրդեան եռեէն ինկած են այս միջոցիս։ Ցիչեալ ժողովուրդը կերևի թէ դիտմամբ կը կեղեքուի, և կարծես թէ զայն աւերել ու ցրուել կուզուի։

Հայոց կրած դարաւոր տառապանքն, որ ներկայ պատերազմին ժամանակ աւելի ծանրացաւ, երկիւղալի կերպիւ կաճի ու կընդարձակի։ Դրան հանդիսաւոր խոստմանց և Պատրիարքարանի ազդու բողոքանաց հակառակ, յիշեալ դժբաղդ գաւառին մէջ Զէյթէզ գաղթականներ ընակեցնելու ջանք կըլլայ։ Այդ անհաճոյ և վնասակար հիւրերը նաւերով Սինոպ կը հանուին, ուսկից ալ Մարսովան, Ամասիա և Հայաստանի ուրիշ գաւառները կը ղրկուին։ Մասնաւորապէս հետաքրքրաշարժ բան մ՚ալ այս է, որ Հայերը կը հաւատան թէ Անգղիոյ աշխարհավարութիւնը նպաստաւոր է այդ գաղթականութեան։

Լրագիրք ազերսագրի մը վրայ կը խօսին, զոր Կ. Պոլսոյ Զէյթէզցոց գլխաւորները Բէուֆ փաշային մատուցեր են՝ իրենց ազգակցաց վրայ եղած ղրպարտութեանց դէմ բողոքելու համար։ Ասոնք մինչև իսկ Բումէլիի մէջ իրենց վերադարձեալ խժդժութիւնները կուրանան։ Բայց այս բողոքներն ըրած ժամանակնին իսկ՝ լրագիրք կը ծանուցանեն մեզ թէ Նիկոմիդիոյ մէջ Անգղիոյ նաւատորմին աչքին առջև ճանբաները բռնած են և ճանապարհորդները կը կողոպտեն։ Բողոքական քարոզիչ մը բովանդակապէս կողոպտուեր է այդ հուդկահարներէն։ Ձիոց և դուարաց դողութիւնն ընդարձակորէն՝ի գործ կը դրուի։ Գաւառին իսլամ և քրիստոնեայ բնակիչներէն ստորագրեալ ազերսագիր մը ներկայացաւ Դրան, բայց բնաւ արդիւնք մը չունեցաւ։

Օսմանեան կառավարութիւնը կրնայ մինչև մէկ տասիճան արդարանալ, վասն զի այս միջոցիս չափազանց ընկճեալ ըլլալով ընդհանրական հոդերէ՝ ժամանակ չունի ներքին վարչութեան պարագաներով զբաղելու, բայց շատ ակումներու մէջ զարմանք կը յայտնուի թէ Անգղիա, հակառակ իւր ըրած յայտարարութեանց, բնաւ հոգածութիւն չցուցներ Ասիոյ դժբաղդ ժողովրդոց վրայ։ Շատ մարդիկ կը հաւատան թէ Անգղիա անտարբերութեամբ կը տեսնէ Քրդաց ասպատակութիւններն, և թէ Զէյթէզցոց գաղթականութեանը կը նպաստէ, բոլորովին անըզդայ կենալով Հայաստանի աւերման։ Արդեօք Հայաստանի անապատ դառնա՞լը կուզէ Ռուսաց արշաւանքն արդիլելու համար։ Ցայտնի է որ Ռուսք ընդարձակիլ կուզեն Ասիոյ մէջ. բայց միանգամայն կը տեսնուի որ Անգղիա ալ դժգոհ աչք չդիտեր Հայաստանի անմարդացումն։ Այդ աշխարհավարութիւնն անբարոյական է և սուտ։ Եթէ այս վիճակը քիչ մ՚ալ տեւէ, Հայերն ու Թուրքերը պիտի պարտաւորին ուրիշ երկիր գաղթել. այն ժամանակ խիստ քիչ ժողովուրդ պիտի մնայ այդ երկրին մէջ, որք թափառական Քրդաց և Զէյթէզցոց ճարակ պիտի տրուին։

Այն ժամանակ Ռուսիոյ ալ պատրուակ չպակսիր բոլոր երկիրը դրաւելու։ Դուք, պարո՛ն ռուսեր, կըսէք թէ մարդասիրական նպատակներով կը գործէք։ Եթէ այդպէս է, Ասուած կօրհնէ ձեր ձեռնարկներն և մարդիկ ալ կօժանդակեն ձեզ։ Ասոր համար պէտք կըլլայ որ ձեր նպատակին հասնելու յարմար եղանակ մ՚ընտրէք։ Երբ տեսնեն որ կեանք, պատիւ և դոյք կապահովին, ամեն մարդ առ ձեզ կը դիմեն։ Եթէ ժողովրդոց կրօնքն ու լեզուն չհալածէք, դիւրաւ կը շահիք Հայերն և մինչև իսկ Թուրքերն։

Ռուսը դիտողութիւն ըրաւ հոս թէ իւր կառավարութիւնը քրիստոնէից ազատութեանը կաշխատի, բայց Եւրոպա՝ և գլխաւորապէս Անգղիա՝ արդեօք կըլլան իւր նպատակին։

—Անգղիա, ըսաւ Հայը, թող տալ չուզեր ձեզ որ Ասիան առնուք. բայց այդ նպատակին չկրնար հասնիլ Թուրքաց իշխանութիւնը պահելով։ Թուրքերն իրրև ժողովուրդ բարի են, բայց Թուրք կառավարութիւնը գէշ է և ուղղուելու ալ տրամադրութիւն չունի։ Սահմանադրութեան մէկ յօդուածը կրսէ թէ Օսմանցիք հաւասար են օրինաց առջև։ Բայց Թուրք կառավարութիւնը միշտ Շէրիին յարելով՝ ամեն բարենորոգմանց արգելք կըլլայ։ Ի՞նչ տեսնուեցաւ Գրքի պատերազմէն՝ի վեր։—Այս միայն թէ զեղծումներն ու կաղմալուծութիւնը զարհուրելի կերպիւ ամեցան։ Ցայտնի է որ քրիստոնեայներն ազատ թողլու է որ իրենք զիրենք կառավարեն։ Խնդիրը քաղաքական ինքնօրինութիւններ բաշխելու վրայ չէ. վարչական ինքնօրինութիւնք բաւական են։ Եթէ Անգղիա Թուրքաց իշխանութիւնն Հայաստանի մէջ հաստատ պահէ, այս ընթացքով շատ չանցած Հայոց ազգը կանհետանայ։

—Ի՞նչ կուզեն Հայք, հարցուց Ռուսը։

—Որովհետև կըսէք թէ ձեզ թող չեն տար Հայաստանը գրաւել, և որովհետև դարերու փորձն ապացուցեալ է թէ Թուրք կառավարութիւնը կառավարութիւն չէ, պէտք է որ Անգղիա բան մը հաստատէ, ինքնօրինութիւն մ՚իւր պաշտպանութեան կամ Եւրոպիոյ երաշխաւորութեան ներքև, և կամ ուրիշ որևէ վարչական ձև մը։ Վերջապէս պէտք է որ չէնք մը կանգնէ, վասն զի մինչև ցարդ քանդելէ զատ ուրիշ բան չըրաւ։

—Պէտք է որ փրկութիւնն անպատճառ Անգղիայէ՞ն գայ, հարցուց Ռուսը։

—Ոչ, ուրկէ գայ՝ թող գայ, բարի եկաւ։ Ով որ Հայոց ջնջումն արգելու և ապագայն ապահովէ, Հայոց ազգն անորն է։ Կը հաւատա՞ք որ Եւրոպիոյ մէջ՝ի նպաստ մեզ գրուածներէն ինչա՞ կը կրենք։ Այս գրուածները կարդալով կը կարծեն թէ Թուրքիոյ հպատակութենէն ազատիլ կուզենք, ուստի մեզ պատժելու համար թոյլ կուտան որ հալածուինք։

Վստահութեամբ կրնանք յայտարարել թէ վերոյգրեալ խօսակցութեան մէջ՝ իրաւ կամ՚սուտ Հայու մը կողմէ յայտնուած կարծիքներէն ամենք Հայոց ազգին կարծիքն ըլլալէ խիստ հեռի են։

Բեդրոսպուրկի Ամանոր Ռիւս լրագիրն հետևեալ տողերը կը հրատարակէ։

«Վերջին օրերս Բեդրոսպուրկի Հայոց եկեղեցւոյն մէջ նշանաւոր հանդէս մը կատարուեցաւ։ Ցայտնի է որ Թուրքիոյ Հայոց կողմէ պատուիրակ եկած է Բեդրոսպուրկ Խորէն Նարբէյ եպիսկոպոսն՝ Այսթէֆանոսի դաշնագրութեան 16 րդ յօդուածին համար յանուն Հայոց ազգին շնորհակալութիւն յայտնելու մեր կառավարութեան։ Յիշեալ եպիսկոպոսը կորչաքոֆ իշխանին, Իկնաթիէֆ կոմսին և այլ մեծամեծաց հետ տեսակցելէ ետև պատիւ ունեցաւ կայսեր ներկայանալու և Հայաստանի մէջ առաջարկեալ բարենորոգմանց վրայ յիշատակագիր մը ն. Վեհափառութեան մատուցանելու։

«Անցեալ կիրակի (Յարկաղարդին օրը) Խորէն եպիսկոպոս պատարագ մատուցանելէ ետև յայտնեց ժողովրդեան թէ Վ.Հ. Կայսրն յատուկ հոգածութիւն ունի Թուրքիոյ Հայոց վրայ։ Բոլոր ժողովուրդը խորին ընդունակալութեամբ լսեց այս երջանիկ լուրն, և անմիջապէս գոհրանական օրհնութիւններ ու աղօթքներ կարդացուեցան Հայոց ազգին Օգոստափառ Պաշտպանին համար։»

ՍԻՐԱՔ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

ԲԱՐԻ ՀՕՐ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԵՐ

ԳՐԵՑ ԹՐԻՄԵՆԱՆ ՀԱՅՐԻԿ

Ե՛ւ ի լոյս ընծայեցին ազնուական եղբարք՝ Յովհաննէս և Մկրտիչ Էսքան

Ի ՆՈՒԷՐ

ՀԱՅՈՑ ՀԱՐՅ ԵՒ ԶԱՐԳԱՑԵԱԼ, ՈՐԴԻՈՅ

Կը ծախուի ամեն հայ գրավաճառաց քով. գին մէկ քսաննոց թղթադրամ։

ՇԻԹՔ ՄԱՆՈՒՆՔ

Ի ՄԻԶԵՐԿՐԱԿԱՆԷ

Երկասիրեաց Հմայեակ Ծ. Վ. Դիմաքսեան

Օժանդակութեամբ

Նպաստիպկեան եղբարց հարազատաց

Մայրաքաղաքս մինչև Լգիպտոս և Երուսաղէմ 32 քաղաքաց և գիւղօրէից վրայ վիճակագրական շահաւէտ տեղեկութիւններ պարունակող 368 երեսէ բաղկացեալ գիրք մ'է, Հայաստանեայց անուն տպարանէ մը ելած։

Կը ծախուի Եէնի դարուի և Մայր եկեղեցեաց բանկաչներն և Ի. Պօլսոյ Հայ գրավաճառաց քով։ Գին կէս արծաթ մէճիտիէ։

Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵՒՔ

Քեբլեռաշ, Մահ Սուրբոյ, Ճաշ, Այլ՝ այլ, Յաւելուած։

Հեղինակն իւր ինչ ինչ ոտանաւոր և արձակ գրուածներն և Լամարդինի Գաղղիացի բանաստեղծին Սուրբոյ Հոգուն գրաբար տաղաչափեալ թարգմանութիւնն ամփոփած է սոյն գրքուկին մէջ։

Կը ծախուի Եէնի-ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 1 քսաննոց թուղթ

ՄԱՐԻՈՆ ՏԸԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԸ

ԿԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հնգինակ Լօյէն տը Միրդուբ

Թարգմանեց Դր. Զիլինկիրեան

Սոյն նշանաւոր վէպին հինգ երորդն է վերջինհատորն ալ Իզմիրի ՏԷՏԷԱՆ եղբարց տպարանէն Պոլիս հատած ըլլալով՝ կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. Կասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ

ԳՐԵԱՑ ԾԵՐԵՆՑ

Սոյն գեղեցկահիւս վիպասանութիւնն՝ որոյ պատմական աղբիւրը Ռուբինեան հարստութիւնն է առնուած է, և որ Քրիստոսի 1145 թուականին՝ Հայոց Կիլիկիոյ մէջ վերսին ձեռք բերած իշխանական մեծութեան ճշգրտատիպ պատկերն է, ամեն Հայ պէտք է փութայ մի օրինակ ունենալ

Կը ծախուի ամեն գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԴԸ

Ժիւլ Վէրն անուանի հեղինակին սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործին Դ. այն է վերջին հատորն ալ Իզմիրէն հատած ըլլալով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆր.

ԱՐԻՆԱԼԻ ՄԱՐԲԻԶՈՒՀԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՏԱՆ ԿՈՄՈՍԿԻ

Թարգմանեց Խ. Ե. Պարունակեան

Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկանայ, երկրորդ հատորն ալ Իզմիրէն հատած ըլլալով, կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի, թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը և այլ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։



ՇԻՐԲԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1878 ԱՊՐԻԼ 1 ՇԱԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ԱՊՐԻԼ 30

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Բոփորէն էջնոջ շոգենաւները
11 30	Եէնիմահալլէն, Մէկ. Պէյիւք. Թարապ. Եէնիք. Սմիւրն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։
12	Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանա. Վանիքէյ, Զէնկէլ. Պէյլէր. Գուզկունճուք, Գաղաթաշ։
11 45	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գաղաթ.
1	Եէնիմահալլէն Մէկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Պօյաճ. Ր. Հիսար, Պէպէք. Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ։
1 15	Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանա. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ.
1 45	Ր. և Ա. Գավաղէն, Եէնիմահ. Մէկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Սմիրն. Էմիրկ. Պօյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավուտ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։
3	Պէյիւքա. Թարապիա, Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանա. Վանիք. Զէնկէլ. Պէյլէր. Գուզկ. Գաղաթ,
3	Մէկզար. Պէյիւքա. Թար. Եէնիք. Սմիրն. Էմիրկ. Գանլ. Ր. Հիսար, Պէպէք. Սիրքէճի-իսկէլէսի։
4	Եէնիմ. Մէկզար. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Սմիրն. Էմիրկ. Պօյաճ. Ր Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. Օրթ. Պէշիկ։
5 15	Եէնիմ. Մէկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Պէյլ. Օրթաք. Պէշիկթաշ։
6 15	Եէնիմ. Պէյիւքա. Թարապ. Պէյքօզ. Եէնիք. Էմիրկ. Գանլ. Ր. և Ա. Հիսար, Գանա. Արնավ. Զէնկ. Պէյլ. Օրթաք. Գուզկ. Պէշիկ. Իւսկիւտար։
8 45	Պէյիւքա. Թարապ. Պէյքօզ, Սմիրն. Պօյաճ. Ր. Հիսար, Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ։
8	Ա. և Ր. Գավաղէն, Մէկզարպ. Պէյիւքա. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէօյ, Պէշիկ։
8 45	Պէյիւքա, Պէյքօզ, Բաշապ. Ր. փ. մահ. Գանլ. Ա. Հիսար, Գանա. Վանիք Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ։
10 15	Եէնիմահ. Մէկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար Պէպէք, Արնավ. Օրթաք Պէշիկթաշ։

ԿՈՄՈՒՐՋԷՆ ԷՋՆՈՋ ՇՈՓԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	
12 30	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պօյաճ. Եէնիք Թարապ. Պէյիւքա. Մէկզար
1	Գաղաթաշ, Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանա. Ա. և Ր. Հիսար, Գանլ. Էմիրկ. Եէնիք Պէյքօզ, Թարապ. Պէյիւքա. Եէնիմահ.
2	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր Հիսար, Էմիրկ. Սմիրն. Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Մէկզարպ. Եէնիմահալլէ։
2 30	Իւսկիւտար, Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանլ. Ր. փ. մահ. Բաշ. Պէյքօզ, Պէյիւքա.
3 15	Պէշիկթաշ, Օրթաք. Պէյլ. Արնավ. Ր Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Մէկզարպ. Եէնիմահալլէ։
5	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիքէյ, Պէյքօզ. Թար. Պէյիւքա. Մէկզար. Եէնիմահ. Ր. և Ա. Գավաք։
6 30	Իւսկիւտար. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանա. Ր. Հիսար, Պօյաճ. Եէնիք. Թարապ. Պէյիւք.
8 15	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէյիւքա Եէնիմահ։
9 45	Գուզկունճուք, Պէյլ Զէնկ. Վանիք. Ա Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ, Թարապ. Պէյիւքաէրէ։
10	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Մէկզար. Եէնիմ. Գավաղներ։
10 30	Գուզկունճուք, Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ, Պէյիւք։
10 30	Սիրքէճի-իսկ. Պէպէք, Ր Հիսար, Գանլ. Էմիրկ. Սմիրն. Եէնիք. Թարապ. Պէյիւքա. Եէնիմահալլէ։
11	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պօյաճ. Էմիրկէն Եէնիք. Թարապ. Պէյիւքա։
11	Գաղաթաշ, Գուզկ. Պէյլ. Զէնկէլ. Վանիք. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ։
11 35	Պէշիկթաշ, Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ։
12	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ։

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Իւսկիւտարէն Կոմուրջ. Ժամ	Կոմուրջէն Իւսկիւտար. Ժամ
12	6 35
12 30	8
1	8 30 Պէշիքթաշ
1 30	9
2	9 35
2 30	10
3	10 20
3 30	10 45
4	11 5
4 30	11 25
5	11 40
5 30	12
6	

Կոմուրջէն Իւսկիւտար. Ժամ	Իւսկիւտար. Ժամ
12 15	7 45
12 45	8 20
1 15	8 50
1 45	9 20
2 15	9 50
2 45	10 15
3 15	10 40
3 45	11
4 15	11 20
4 45	11 40
5 15	11 50
5 45 Պէքթ.	12 5
6 20	

ՈՒՐԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իւսկիւտարէն Կոմուրջ. Ժամ	Կոմուրջէն Իւսկիւտար. Ժամ
12	5 30
12 30	6
1	6 35
1 30	8
2	8 40 Պէշիքթաշ
2 30	9 15
3	10
3 30	10 30
4	11
4 30	11 30
5	12

Կոմուրջէն Իւսկիւտար. Ժամ	Ժամ
12	5 35 Պէքթ.
12 30	6
1	6 40
1 30	8
2	8 45
2 30	9 20
3	10
3 30	10 35
4	11 5
4 30	11 35
5	12 5



ՋՐՀԱՆ

Ամերիկայի ջրհանները մեծ և փոքր, երկաթէ հաստատուն խողովակներով թէ ջրշեղջներու և թէ խորունկ հորերու համար ամեն դներով կը ծախուի, Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԿԱՐԻ ԴՈՐԾԻՔ

Փոքր «վանձէր» կոչուած ձեռքով դարձող ու անքակ կար կարող գործիքը ամեն տեսակ կար մեծ դիւրութեամբ կը կարէ ու գինն ալ աժան է, երաշխաւորութեամբ կը տրուի, ուրուածները կը շտկուի ու կարել չգիտցողին դաս կը տրուի. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՈՊ

Յայտնի է որ երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը գրեթէ շարունակ փորի ցաւ, փորհարութիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնալ, ջղային գրգռութիւն ևայլն կունենան, մանաւանդ ակռա հանելու միջոցին, և այս նեղութիւններն ալ աւելի կը ստատկանան ամառուան տաք եղանակին։ Սութինկ Շիրոպը վերոյիշեալ դժուարութեանց ամենուն ալ առաջքը կառնէ ու կը բժշկէ, որով երախան կը հանգչի ու կը զօրանայ, յուրախութիւն մեծ իւր ծնողաց։ Գործածողները շատ գոհ են։ Ուզողը կրնայ փորձել. գինն աժան է. նորածին երախայից կաթիլով կը տրուի, վեց ամիսէն վեր եղողին օրը երեք անգամ գրգալ. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

Այս լրագիրը չարաթը երեք անգամ կը հրատարակուի, երեքշաբթի, հինգշաբթի եւ չարաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Ղալաթիա Անտոքքճրլար ճատտէսի թիւ 198, Նօրօ խան Մասիսի խմբագրատունը։

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները։

ԻԶՄԻՐ. Սահփան աղա Ֆէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով էֆ. Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Սահփան աղա Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Յովակիմ աղա Ուզունարդեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր աղա Էլմասեան
ԿԱՐԻՆ. Կարապետ աղա Ղազարեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նահանեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փոթիկեան
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան.
ՖՈՓՇԱՆ Գէորհատ աղա Ա Գէորհատեան
ԵՐԶՆԿԱՅ. Թադէոս աղա Բաղրատեան։
ՍԻՎԱՍԻԱՅ. Սրժ. Ասրէն.

Բերիչ քաղաքներէ ստորագրութիւններն ասոնց տեղերէն մէկուն հետ երթան թղթակցիր։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
ՂԱԼԱԹԻԱ ՆՕՐՕ ԽԱՆ